Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 977 - Ա որոշման

«ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (COAF) նախատեսում է իրականացնել ՀՀ Լոռու մարզի, Դեբետ համայնքի համայնքապետարանի շենքի արտաքին ջերմամեկուսացման և երեսպատման աշխատանքները: Սկսած 2020 թվականի հոկտեմբեր ամսից, հիմնադրամը տարբեր ուղություններով ներդրումներ է կատարել համայնքում: Դրանցից ամենահատկանշականը համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային տարածքի վերափոխումն էր: Այս նույն շենքի երկրորդ հարկը ամբողջովին վերանորոգվել է: Այժմ համայնքի երկրորդ հարկում գործում է գրադարան, ինչպես նաև այնտեղ է տեղակայված համայնքի ղեկավարի գրասենյակը և աշխատակազմի գրասենյակը: Երկրորդ հարկում է գտնվում հանդիպումների սենյակը, որն ինչպես և մյուս նշված տարածքները կահավորվել են հիմնադրամի միջոցներով: Հիմնադրամի հաջորդ ծրագրերը ներառում են համայնքապետարանի առաջին հարկի վերանորոգում, որտեղ տեղակայվելու է վարսավիրանոց, ցուցասրահ և Հայփոստի նոր գրասենյակը:<br>Այս ամենը ստիպեց մեզ մտածել շենքի արտաքին տեսքի և ջեռուցման վրա ծախսվող միջոցների մասին: Երեսպատման ճարտարապետական նախագիծը իրականացրել է երիտասարդ ճարտարա-պետ Տիգրան Մելքոնյանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972): |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | • ՀՀ Լոռու մարզ, Դեբետ համայնք<br>• Համայնքային զարգացում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 21,737,439 (քսանմեկ միլիոն յոթ հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր երեսունինը) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզի Դեբետ համայնք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2021 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2022 թվականի ապրիլի 29-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Դեբետ համայնքի համայնքապետարանի շենքի (ՀՀ, Լոռու մարզ, Դեբետ համայնք, 2-րդ փողոց, շենք 8) արտաքին ջերմամեկուսացման և երեսպատման կապալի աշխատանքներ ընդամենը՝ 21,737,439 ՀՀ դրամ, 2021 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2022 թվականի ապրիլի 29-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում ներմուծումներ չեն նախատեսվում: Ծրագրի շրջանակներում կնքվելու են միայն շինարարական աշխատանքների կատարման կապալի պայմանագրեր 21,768,600 ՀՀ դրամի շրջանակներում: Այդ պայմանագրի շրջանակներում կապալառուն պարտավորված է լինելու իր սեփական միջոցներով և նյութերով իրականացնել տանիքների վերակառուցումը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, Լոռու մարզպետարանի, Դեբետի համայնքապետարանների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ